«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Իսպիրյան

Ուսումնական հաստատություն՝ Ֆ. Աշտարակ Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոց

Երևան 2022



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑ՝

Արդյո՞ք Աստվածաշնչյան առակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:

Պլանավորում՝

- Առակների ուսուցման կարևորումը սովորողի արժեքային համակարգի ձևավորման գործում
- Ի՞նչ է առակը
- Փարիսեցու և մաքսավորի առակը
- Առակի մեկնություն
- Քննարկում «Ամեն ոք, ով բարձրացնում է իրեն, կխոնարհվի. բայց նա, ով խոնարհեցնում է իրեն, կբարձրանա»
- Աստվածաշնչյան մեջբերումներ
- Առակից բաղված դասեր
- Եզրակացություն-Հարցաթերթիկ
- Անդրադարձ

Նպատակը՝ Սովորողը

1. Ուսումնասիրել Աստվածաշունչ մատյանը,պատգամները իր համար դարձնելով ապրելակերպ:
2. Ուսումնասիրել,հանաչել Աստվածաշնչյան առակները;
3. Արժևորել խաղաղասիրությունը, արդարությունը,խոնարհությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:
4. Արժևորել թույլին օգնելու, անպաշտպանին պաշտպանելու, փոխադարձ հարգանքի, սիրո, համերաշխության, ազատության, հավասարության և եղբայրության վրա հիմնված մարդկային հարաբերությունները:
5. Կիրառել էթիկական և վարքային կանոնները, ձևավորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք իր ու շրջապատի նկատմամբ:
6. Զարգացնել իմացական գործընթացները,ձևավորել վերաբերմունք արժեքների նկատմամբ
7. Գնահատել քրիստոնեական արժեհամակարգի դրսևորումները:
8. Գիտակցել քրիստոնեական հավատքի դերը և նշանակությունը որպես մարդասիրական կրոն:

Առակների ուսուցման կարևորումը սովորողի արժեքային համակարգի ձևավորման գործում

Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն է, իմացական որակների զարգացումն ու ձևավորումը:Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների գումարով, չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով: Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավոր ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը: Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որը իրենից ներկայացնում համագործակցային ուսուցում և պահանջում է հնարավորինս ճիշտ և հստակ կազմակերպում:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեքաբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում:

Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության , դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով . մտորել– գնահատել – իմաստավորել– յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում:

Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում:Անձի դրական հատկանիշների գնահատումը, արժևորումը բացահայտվում է այն բարոյախոսությամբ , որ փոխանցվում է առակի միջոցով:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ի՞նչ է առակը

Առակը խոսքի արտահայտման այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է առանձին, մի օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Այսինքն՝մի պատմություն և զրույց է, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում:

Առակը փոխաբերական իմաստ ունեցող պատմություն է, որը նպատակ ունի անուղղակի կերպով բացահայտելու որևէ ճշմարտություն: Առակներն ազդեցության մեծ ուժ ունեն,քանի որ նյութական

ձևի վերածված պատկերը մտքի վրա ավելի մեծ տպավորություն է գործում,քան վերացական գաղափարը: Առակները ունկնդիրներին ստիպում և պարտադրում են հետաքրքրվել, մտածել, ինքնուրույն եզրակացություններ:

«Առակ» բառը հին հայերենում նշանակել է խրատ, իմաստություն, այլաբանություն, բարոյախրատական նշանակություն ունեցող փոքրիկ գրույց: Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակ է, որ վերոհիշյալ գրեթե բոլոր հատկանիշները ունի իր մեջ ներառած:

Առակները գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են կենդանիների, բույսերի, ինչպես նաև մարդկանց մասին պատմող զանազան հետաքրքրաշարժ գրույցներ, որոնք ունեն այլաբանական իմաստ: Նրանցում կենդանիները ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում է լավը, բարին, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում է վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը: Ամեն մի առակ ունի խրատական դաստիարակիչ իմաստ:

Առակները հին ժամանակներից ի վեր սիրված ու թարգմանաբար տարածված են եղել աշխարհի շատ ժողովուրդների բանահյուսության և գրականության մեջ: Առակների ամենահին հեղինակը հույն Եզոպոսն է, որի անունով բազմաթիվ առակներ:Հայ գրականության մեջ առակները երևան են եկել վաղ միջնադարում,սկզբում հունական առակների թարգմանություններով, որոնք ամփոփված են եղել «Բարվափոս» և «Ոլիմպիանի առակները» ժողովածուներում, հետագայում՝12-13-րդ դարերում , առակներ են գրել նաև հայ հեղինակները, որոնցից նշանավոր են Մխիթար Գոշը,Վարդան Այգեկցին:Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ,ամենահայտնին՝ «Աղվեսագիրքն» է:

Առակը դա գեղարվեստական պատմվածքի մի տեսակ է, որն ունի դիդակտիկ և բարոյականացնող մտադրություն:Հետևաբար,այն սովորաբար ուղեկցվում է բարոյական,այսինքն՝բացահայտ մեկնաբանություն պատմության մեկնաբանման վերաբերյալ:Գրական այս ժանրը ծառայում է արժեքներ տարածելու և ուսուցանելու, ինչպես նաև հակասոցիալական վերաբերմունք ցուցաբերելու համար:

Առակների ամենաբնորոշ առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալը.

- Դրանք հանրահանաչ են
- Դրանք հակիրճ են
- Նրանք կարող են շփվել չափածո կամ արձակ լեզվով
- Պատմության կարգը գծային է ՝առանց ժամանակի թռիչքների
- Դրանք դաստիարակչական . բարոյականացնող են
- Անժամանակ են, կերպարները ներկայացնում են հնագետները

- Գերակշռում են կենդանիների կամ հումանիզացված առարկաների (անձնավորված) կերպարները ,կան նաև կերպարներ մարդկային և աստվածային կերպարներով



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑ՝

Արդյո՞ք Աստվածաշնչյան առակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում

«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի...

ԵՍԱՅԻ մարգարե

Ուշագրավ է, որ Աստծո ներշնչված գրված այս խոսքերը սաղմոսերգուն ասել էր Հիսուսի ծնվելուց դարեր առաջ: Ստացվում է,որ իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր,որ նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել ,որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը: Հիսուսը այդպես է սովորեցնում ,որ նրանց համար հետաքրքիր լինի հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: Ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց,ում «սիրտը կարծրացել» էր ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում ,որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար:Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ:

Փաստորեն,առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց,ում սիրտը ծարավ էր ճշմարտության,սակայն թաքնված էր մնում նրանցից,ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝մղելով նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ:

Աստվածաշնչյան առակի արժեքն այն է, որ նա մարդկային հարաբերություններն ու գործողությունները համարում է հոգևորի, աստվածայնության տեսանկյունից: Նման այլ պատմություններ ավելի մարդկային են, նրանք չունեն այդ առեղծվածի առեղծվածը, չնայած դրանք կարող են լինել ոչ պակաս հնագույն և ուսանելի:

Անուրանալի է առակների ուժը, քանի որ հասարակ ժողովրդի մտքի վրա ավելի մեծ տպավորություն է գործում նյութական ձևի վերածված պատկերը, քան՝ վերացական գաղափարը:Երիտասարդ սերնդի համար

առակը կարող է դառնալ կյանքի որոշակի պահի առաջնորդող լույս, ինչպես նաև հարցի ճշգրիտ և պատասխան: Բացի այդ, դրանք բավականին պարզ են, նրանք չունեն ծաղկունություն, ինչը բոլորի համար հասկանալի չէ: Իսկապես, շատ բան կարելի է ասել այս ուսանելի պատմությունների իմաստության մասին:

Առավել մարդասիրական կրոն, քան քրիստոնեությունն է անհնար է պատկերացնել:Քրիստոնեական գթասրտության,մարդասիրական ամենապատկերավոր օրինակներից մեկն է ՝բարի սամարացու մասին պատմող առակը:

Փարիսեցուև մաքսավորի առակը



«Երկու մարդ տաճար էլան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և, ինքն իրեն, այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, և կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր

կուրծքը և ասում. «Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետև, ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»:

(Ղուկաս 18:10-14)

Առակս ի՞նչ կցուցանե...

Առակի մեկնություն

Առակի դերակատար անձինք երկուսն են, և նրանք պատկանում են տարբեր դասակարգերի: Մեկը փարիսեցի է, իսկ մյուսը՝ մաքսավոր: Երկուսին էլ կարող ենք համարել իրենց դասակարգերի տիպիկ ներկայացուցիչներ: Լավ ընբռնելու համար, թե Հիսուսի դատաստանն ինչ տպավորություն գործեց Նրա ունկնդիրների վրա, հարկ է ծանոթանալ այս երկու տեսակի անձանց մասին ժողովրդի ունեցած կարծիքին:

Ժողովրդի համար փարիսեցին օրինակելի, մաքրամաքուր հրեան է: Նա ստուգիորեն գործադրում է մովսիսական օրենքի բոլոր պատվիրանները, իր ունեցվածքից տասանորդ է տալիս Տաճարին, անխափանորեն կատարում է իր լվացումներն ու աղոթքները և չի հափշտակում այն, ինչ ուրիշին է պատկանում: Այս ամենից բացի փարիսեցին, իր իսկ բարեպաշտությունից դրդված, շաբաթը երկու օր ծոմ է պահում: Նա կրոնասեր մարդու տիպարն է և հարգվում է իր ազգի ներկայացուցիչների կողմից:

Փարիսեցու առաքինությունը, սակայն, այդքանով էլ դեռ չի վերջանում. նա միևնույն ժամանակ ազգասեր է: Հրեական մեծ փափագը՝ Մեսիայի թագավորությունը, փարիսեցու հոգու մեծագույն տենչն է: Նա որքա՜ն էր երազում, որ շուտով գար ընտրյալ ժողովրդին Խոստացվածը, Ազատարարը: Եվ վերջապես փարիսեցին նաև ուսումնասեր է, ու նրա ամենօրյա մտավոր սնունդն օրենքի սրբազան մատյաններն են: Որևէ մեկի մտքով չէր անցնում դատապարտություն լսել այսպիսի զարգացած, ազգասեր և բարեպաշտ անհատների մասին:

Իսկ մյուսը՝ մաքսավորը, ծայր աստիճան արհամարհելի էր, հասարակության ապականիչ ցեցն էր: Նա պիղծ էր Աստծու և մարդկանց առջև: Նրա պաշտոնը՝ հարկահավաքությունը, ամենքի համար ատելի մի գործ էր, որից պետք է խորշեր արժանապատվության տարրական զգացումն ունեցող որևէ հրեա: Մաքսավորը չէր

հարգում Օրենքը՝ իր ազգի մեծագույն սրբությունը: Նա ազգատյաց մեկն էր, որն իր հայրենակիցներից հավաքած դրամը գարշելի օտարի ափի մեջ էր լցնում:

Մաքսավորն իր ժողովրդի ազատության թշնամին էր, քանի որ օժանդակում էր անօրեն բռնավորի գերիշխանության հաստատմանը: Նա մարմնացումն էր այն բոլոր չարիքների ու ստորությունների, որոնք ապականում են մարդ էակի էությունը: Որևէ մեկի մտքով չէր անցնի մաքսավորի մեջ արդարության նշույլ տեսնել:

Սակայն ո՞րն էր փարիսեցիների մեծ մասի դատապարտության հիմնաքարը: Այս հարցի պատասխանը գտնելու համար հարկ է ճնշել փարիսեցու հոգեկան տրամադրվածությունը, որը մասամբ ցոլանում է նրա աղոթքի մեջ: Իսկույն աչքի են զարնում երկու մեծ թերություններ. հպարտություն և չարախոսություն:

Փարիսեցին պարծենում է իր՝ արդարամիտ անձ լինելու համար, իրեն մյուս բոլոր մարդկանցից գերակա է համարում և իրեն մեծամեծ բարիքներ պարգևող Աստծի առջև այդ բարիքների մեկ տասներորդը Տաճարին տալն իր անձի մեծ առաքինությանն է վերագրում:

Նրա այդ օրինապահությունը մարդկանց աչքին էական հատկանիշ է թվում, սակայն Աստծու չափանիշը, որով Նա չափում է մարդկանց արդարությունը, հիմնված է այլ սկզբունքների վրա: Այդ պատճառով է, որ փարիսեցու արդարությունն անկատար է, իսկ հպարտությունը՝ դատապարտելի:

Մյուս թերությունը՝ չարախոսությունը, կապված է փարիսեցու հպարտության զգացումին: Որպեսզի Աստծուն ցույց տա իր գերազանցությունը, ինքն իրեն համեմատում է մյուս մարդկանց հետ, որոնք, նրա կարծիքով, հափշտակողներ, անիրավներ ու շնացողներ են: Անշուշտ, ճիշտ չէ, որ փարիսեցուց բացի մյուս բոլոր հրեաներն այս մեղքերի ծառաներն էին: Բայց եթե անգամ այդպես լիներ, արդյո՞ք նա իրավունք կունենար նրանց մասին չարախոսելու, նրանց ամբաստանելու, դատելու և դատապարտելու:

Արդար կամ բարի մարդն ինչպե՞ս չէր վարանի այդքան հապճեպ դատապարտության ենթարկել ազգի մեծ մասին: Ուրիշներին դատելու հարցում փութաջան այդ փարիսեցին արդյոք օրերից մի օր միևնույն խիստ ու անաչառ հայացքը դարձրե՞լ էր իր վրա. կասկածելի է, քանի որ այդ Ուրիշը՝ փարիսեցուց գերազանցորեն ավելի արդարասեր ու բարի Մեկը, նրա վրա մեծագույն հանցանք էր մատնանշում: Քանի՛-քանի՛ անգամ Հիսուս դատապարտեց փարիսեցիների կեղծավորությունը: Այդ փարիսեցին ավելի լավ կաներ մյուս մարդկանց իբրև հափշտակողներ, անիրավներ ու շնացողներ դատապարտելու փոխարեն ինքն իրեն դատապարտեր՝ իբրև կեղծավորի, հպարտի ու բամբասողի:Հիսուսի դատողությունը բոլորովին հակառակն է: «Աստծու առաջ,-ասում է,-մաքսավորն արդարացավ և,Աստծուց թողություն ստանալով,դուրս եկավ տաճարից՝ ներված ու սրբված,այնինչ արդար երևացողը նոր մեղքի տեր եղավ և տաճարից դուրս եկավ ավելի մեղավոր»:Տարբերությունը աղոթքում հայտնված հոգու դրսևորման մեջ է:Ինքն իրեն հավանող պարծենկոտը զղջում չունի,արժանավորություն էլ չունի,մարդկանց խաբելով՝կարծում է,թե Աստծուն էլ է խաբում:Միայն ուրիշներին երևալու համար կատարած օրինապահությունը առաքինություն չէ,բուն առաքինության հոգին չկա նրա մեջ,միայն կեղևն է փայլուն,իսկ միջուկը՝փտած:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տրամադրվածությամբ էր աղոթում մաքսավորը: Կարծես մի շատ ծանր մեղք ուժգին ճնշում էր նրան: Նա ժամանակ չունի երկար-բարակ ճառ ասելու: «Աստվա՛ծ, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս» աղերսն է հնչում նրա շուրթերից, ավելի ճիշտ՝ նրա սրտից, և այդ աղաղակի մեջ ծրարված է մեղքի ամբողջ սևությունը: Նա գնում է՝ լուծվելու-ջնջվելու Աստծու անհուն ներողամտության օվկիանում:

Մաքսավորը ողբալով ծեծում է իր կուրծքը, զղջում իր սրտում սատանային տեղ տալու համար և այժմ ճգնում է իր բռունցքների հարվածներով դուրս հանել նրան: Մեղքը, որ հաճոյալի արտաքինով նրան խաբել ու ներս էր սպրդել, այժմ դուրս էր թափում իր ամբողջ դառնությունը և աղի արցունքներ էր հոսեցնում մաքսավորի աչքերից:

Նրա խավարակուռ հոգում լույսի ճառագայթ էր ներթափանցել և գիտակցության առջև մի սարսափելի տեսարան էր բացել: Մաքսավորը, նոր արթնացած գիտակցությամբ, բուռն ճիգով ցանկանում էր իր վրայից թոթափել մեղքի սև մուրը: Նա փափագում էր իր սիրտը մաքրել ու հարդարել՝ այն դարձնելու տաճար ու բնակարան Սուրբ Հոգու համար, Որը մաքսավորի իր այդ կորստական վիճակում օգնության էր եկել նրան ու ցանկանում էր փրկել անդունդը գահավիժելուց:

Մաքսավորն արդար դատաստանով գտել էր այդ ամենի պատասխանատուին, որ ինքն իսկ էր, և դատապարտել էր նրան: Եվ արդ, երբ մաքսավորը տաճար էր եկել ու պաղատում և ներողություն էր խնդրում Աստծուց, ի՞նչ եք կարծում, ստացա՞վ իր խնդրածը. այո՛, միանշանակ: Չէ՞ որ Հիսուս ասաց. «Խնդրեցե՛ք, և կտրվի ձեզ»:

Այստեղ պետք է նորից հիշենք Հիսուսի դատաստանը՝ տեսնելու համար, թե որքան իրավացի էր այն: «Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը»: Փարիսեցին, որ աղոթելու համար Տաճար մտնելիս

արդար էր, այնտեղից դուրս եկավ իբրև մեղավոր, քանի որ հպարտացավ Աստծու առջև և ամբաստանեց մյուս մարդկանց: Իսկ մաքսավորը, որը Տաճար մտնելիս արդեն մեղավոր էր, այնտեղից դուրս եկավ արդարացած, քանի որ կարողացավ դատապարտել իր անձն ու ներում խնդրել Աստծուց, և Աստված ներեց նրա մեղքերը:Ընդունելի աղոթքի ձևն է նկարագրված մաքսավորի աղոթքի մեջ,որովհետև ճշմարտապես աղոթքը նախ՝ պետք է գիտակցի մեծությունը Նրա,ում աղերսով դիմում է,և դրանով իր անարժանությունը գիտակցել,և դրանով՝ նրա առաջ դողալով կանգնի:Սա արեց մաքսավորը,քանի որ չհամարձակվեց աչքերը երկինք բարձրացնել,որովհետև հասկացավ, թե ով է երկնքում,և ով է ինքը,որ կանգնած է Նրա առաջ:

Այս ամենից հետո մեր ուշադրությունը սևեռենք մեկ կետի՝ անձնադատության վրա: Մեր բոլոր խորհուրդների, աղոթքների, խոսքերի, գործերի և արտահայտությունների մեջ զգուշանանք ուրիշներին դատելուց ու դատապարտելուց, «քանի որ ինչ դատաստանով որ դատենք ուրիշներին, նույն դատաստանով էլ պիտի դատվենք»:

Միևնույն ժամանակ չմոռանանք անաչառորեն դատել ինքներս մեզ. դա քրիստոնեական բարոյականության ամենաէական կանոններից մեկն է: Ամեն ոք նախ իր անձի դատավորը պետք է լինի: Ուզո՞ւմ ենք զերծ մնալ ուրիշների դատաստանից, ուրեմն պետք է մեր անձնադատությամբ վճարենք այդ տուրքը:

Ամեն մարդ էլ դատապարտելի բան ունի իր մեջ: Իրենք իրենց արդար համարողներն անկասկած ենթակա են այս փարիսեցու տկարությանը, նրա՛, ով ձեռքից բաց էր թողել սեփական թերությունները տեսնելու կարողությունը: Նա, ով իր այդ թանկագին կարողությունը հարկ եղածի պես չի գործածում, վաղ թե ուշ ենթարկվելու է ուրիշների դատաստանին ու իր դատապարտությանն է արժանանալու:

Լավ քննենք ինքներս մեզ, այն խոշորացույցը, որով նայում ենք ուրիշների հանցանքներին, ուղղենք դեպի մեր անձերը, դեպի մեր հոգիները, և պիտի տեսնենք, որ մութ անկյուններում երևում են սատանայի սև ոտնահետքերը: Մտաբերենք շնացող կնոջ պատմությունը և ամբոխի ընկրկումն այնժամ, երբ Հիսուս ասաց. «Ով որ անմեղ է, առաջին քարը թող նա՛ նետի» :

. https://www.youtube.com/watch?v=zgmRyxglOJY

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Ամեն ոք, ով բարձրացնում է իրեն, կխոնարհվի. բայց նա, ով խոնարհեցնում է իրեն, կբարձրանա» (Ղուկաս *18:14*).

Հպարտություն և խոնարհություն

- Հպարտության հակառակն է խոնարհությունը՝ամենակարևոր առաքինություններից մեկը:
- Խոնարհ մարդը չի հայտարարում իր բարի գործերի մասին և իր առավելությունները չի ցուցադրում:
- Խոնարհության և համեստության առաքինությունն է ի հայտ բերում մարդու առավելություններն ու մեղքերը:
- Խոնարհ և համեստ մարդն իր առավելություններն ընդունում է իրբև աստվածային շնորհ և ջանում է սրբագրել իր մեղքերը՝ գործադրելով իր բոլոր կարողությունները,կամքն ու շնորհը:
- Մարդիկ սովորաբար խորշում են հպարտներից,իսկ խոնարհներին՝սիրում և հարգում են:
- Հպարտ մարդն իր մասին այնքան բարձր կարծիք ունի,որ արհամարում է մյուսներին:
- Հպարտ և եսասեր մարդը թշնամի է իր ընկերներին և չի սիրվում նրանց կողմից:Խոնարհ և հեզ մարդուն բոլորն են սիրում:
- Քրիստոնեության հանդեպ հպարտությունը ամենալուրջն է յոթ մահացու մեղքերից, որոնք առաջացրել են մնացած բոլորը : Հպարտությունն ընկած է կամ հատվում է այնպիսի արատների հետ, ինչպիսիք են ագահությունը, նախանձը և զայրույթը:
- Հպարտությունը նաև խստացնում է մարդու սիրտը, նրան դարձնում է դաժան:

Աստվածաշնչյան մեջբերումներ կամ վկայություններ

Հպարտ մարդն անսանձ է դառնում ու պիղծ գործողության դիմում՝ չմտածելով, որ տիեզերքն արարող Աստված է տերերի Տերը. «Եվ նրանք հպարտացան ու պղծություններ արին Իմ առաջ, և նրանց վերացրի հենց տեսա» (Եզեկ. 16. 50):

«Սա իմացիր, որ վերջին ժամանակներում.... մարդիկ կլինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյիչ, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր.... որ աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունն ուրացել են. նրանցից էլ ետ փաշվի՛ր» (Բ Տիմոթ. 3.1-5):

«Ձեզ վրա առե՛ք Իմ լուծը և Ինձնից սովորե՛ք, որովհետև Ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք» (Մատթ. 11.29):

«Թող քեզ քո ընկերը գովի, եւ ոչ թե քո բերանը, օտարը եւ ոչ թե քո շուրթերը» (Առակ. ԻԷ 2),

«Ով իր անձից է խոսում, իր անձի փառքն է որոնում» (Հովհ. Է 18):

Սբ Պողոս առաքյալն ասում է. «Միայն ձեր շահը մի փնտրեք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ» (Փիլիպ. Բ 4):

«Մի արեք որեւէ բան հակառակության հոգով, ոչ էլ որեւէ բան՝ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկդ մյուսին ավելի լավ համարեցեք, քան ինքներդ ձեզ» (Փիլ. Բ 3):

«Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք» (Մատթ. Է 1):

Ով «հակառակ է ամբարտավաններին, իսկ խոնարհներին շնորհ է տալիս» (Ա Պետ. Ե 5)՝

«Նախ քո աչքից գերան հանիր, հետո կտեսնես, թե ինչպես կարելի է ասեղը հանել քո եղբոր աչքից»: (Մատթ. 7:3-5)

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ



Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը գրավեց արևելքի երկրները և բազմաթիվ թագավորների գերեվարեց: Նա հպարտացավ և կարծեց,թե ինքն աստված է: Ոսկուց կերտել տվեց իր արձանը և հրամայեց,որ բոլոր մեծամեծերն ու գերի թագավորները երկրպագեն իրեն: Դրա համար Աստված նրան

պատժեց.նա խենթացավ,թողեց գահը , գնաց անապատ ու ապրեց գազանների հետ:Հետո, երբ զգաց,որ ինքը մի հասարակ մարդ է իր տարած հաղթանակների համար Աստծուն է պարտական,զղջաց և ընդունեց Աստծո զորությունն ու սրբությունը:Տեսնելով այդ՝Աստված նրան վերադարձրեց գահը և նախկին պատիվը:

Դանիել մարգարե

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարցաթերթիկ

- Ո՞ւմ հետ եմ ես ավելի շատ շփվում՝ մաքսավորի՞, թե՞ փարիսեցու հետ: Ներքին առումով ո՞ւմ պաշտոնն է ինձ ավելի մոտ:
- Ինչպիսի՞ մարդկանց եմ ես արհամարհում, վատն եմ համարում և հավատում, որ չեմ գործում նրանց սխալներն ու մեղքերը:
- Ինչպե՞ս կարող եմ փոխել իմ վերաբերմունքը նրանց և իմ նկատմամբ:
- Եթե մաքսավորի պաշտոնն ինձ ավելի մոտ է, ապա ի՞նչ եմ ես ակնկալում Աստծուց:
- Կարո՞ղ եք հիշել դեպքեր, երբ իրեն բարձրացնողը նվաստացվեց, իսկ իրեն նվաստացնողը բարձրացվեց:
- Հաճա՞խ եք պարծենում բարի գործերով՝ զգալով ձեր արժանապատվությունն ու գերազանցությունը:
- Դուք ցուցադրո՞ւմ եք ձեր բարեպաշտությունը, որպեսզի ուրիշները ձեզ ավելի հաճախ գովաբանեն և օրինակ ծառայեն:

Առակից բաղված դասեր

1. Որքան էլ հպարտը բարձրացնում է իրեն,միևնույն է ,նրա ով լինելը հայտնի է Աստծուն:
2. Լավ չէ մարդկանց առջև գովաբանել ինքն իրեն և բարիք գործելիս մարդկանցից գովասանք ակնկալել:
3. Լավ է մեղավորներին բաջալերել՝ զղջալու իրենց գործած մեղքերի համար,որովհետև Աստված ընդունում է նրանց ապաշխարությունը:
4. Աստված կաևորություն չի տալիս ձևապաշտությանը,այլ նայում է մարդկանց սրտերին և խոնարհություն որոնում նրանցում:
5. Աղոթքը պետք է խոնարհ լինի:

Անդրադարձ

Արդյո՞ք Աստվածաշնչյան առակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:Առակները մեծ նշանակություն ունեն քրիստոնյայի կյանքում, ներկայացնում են ուսմունք, որը հարստացնում է հոգևոր կյանքը, Աստծո խոսքում ներկայացված առակներից յուրաքանչյուրը հոգևոր ոլորտի մասին հիշտ գիտելիքի աղբյուր է, ինչպես նաև. Աստծո որդու առօրյան: Աստվածաշնչյան առակները ինչ-որ կերպ հեքիաթներ և պատմություններ են, որոնք հիմք են տալիս մտածելու կյանքի և մեր արարքների մասին, կրում են ուսանելի պահ: Նրանցից յուրաքանչյուրի մեջ կա մի իմաստության հատիկ, որը կամաց-կամաց աճում է ու տալիս իր դրական ընձյուղները:

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Առակի ուսուցումը՝ մարդասիրական որակներ սերմանելու հրաշալի միջոց է աճող սերնդի համար:

Այսօր շատ կարևոր է սովորողներին փոխանցել մաքսավորի և փարիսեցիի առակի իմաստը: Ի վերջո, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ ընդունված է մարդկանց պիտակավորել, համեմատել՝ ով ինչ ունի, ով ինչի է հասել:Մենք շատ օրինակներ ունենք, երբ մարդը հպարտանում է իր գործած մեղքերով, և երբեմն էլ ոմանք նախանձով են նայում նրա հաջողություններին, որոնք ձեռք են բերվում մեղքի պատճառով: Աստծու աչքի առջև առավել ընդունելի է զղջացող մեղավորը, քան հպարտ բարեպաշտը: Աստծու խոսքի հիշտ ընկալումը մարդուն դարձնում է խոնարհ, զղջացող և մեղքից հնարավորինս խուսափող մարդ: Հպարտության պատճառով դուրս չմնանք Աստծու փրկության ծրագրից: Մաքսավորի և փարիսոսի առակը Քրիստոսի կոչն է՝ մտածելու և արմատախիլ անելու կեղծավորությունը, որն ապրում է յուրաքանչյուրիս մեջ :

Մնանք սիրով՝ առակի հերոսների դրական գծերը վերցնելու ակնկալիքով: Աստվածային սեր, նախախնամություն, արդարություն և ամենակարողություն, աղոթք և պահեցողություն, «ես»-ի և մեղքի հաղթահարման բազում ուղիներ. ահա այս թեմաներն են արծարծված առակներում:

Ի՞նչ են մեզ սովորեցնում Աստվածաշնչյան առակները: Նրանք ստիպում են մտածել մեր արարքների մասին, հասկանալ դրանց հետևանքները: Այս ամբողջ գիտակցության արդյունքում առաջանում է այնպիսի դրական հատկությունների ձևավորում, ինչպիսիք են գթասրտությունը, բարությունը, կարեկցանքը, սերը մարդկանց հանդեպ:

Երիտասարդ սերնդի համար առակը կարող է դառնալ կյանքի որոշակի պահի առաջնորդող լույս, ինչպես նաև հարցի նշան և պատասխան: Յուրաքանչյուր առակ հստակ պատգամ ունի: Հետևենք դրանց և փորձենք կիրառել մեր կյանքում:

Այսպիսով Աստվածաշնչյան առակների ուսուցումը երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ: Սովորողների մոտ ձևավորվում է բարոյական արժեքներ,ինչպիսիք են.

- ազնվություն
- սեր
- բարություն
- հերոսամտություն
- հանդուրժողականություն
- ընկերասիրություն
- գթասրտություն
- խոնարհություն

Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր շարունակ կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը, ընդլայնել աշխարհահանաչողական գիտելիքները:

Դռների ետևում են մնում այն աղոթքները (չեն հասնում Աստծուն), որոնք իրենց մեջ սեր չեն պարունակում, որովհետև միայն սերն է բացում աղոթքի դռները :

(Եփրեմ Ասորի):

Աղոթքով փնտրե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, որ մեր ներսում է :

(Մարկոս Ճգնավոր)

Առանց աղոթքի մեր հոգևոր կյանքը թոշնում, ծարավում ու մեռնում է: .

(Հովհան Ոսկեբերան)

Աղոթքը հեզության, անբարկության, անհիշաչարության և սիրո բխումն է

. (Նեղոս Սինայեցի)

Թող քո շուրթերը միշտ սաղմոսեն, որովհետև Աստծո անվան արտաբերումը փախուստի է մատնում դևերին: Եթե ձեռքերդ աշխատում են, թող լեզուդ սաղմոսի, իսկ միտքդ աղոթի:
(Եփրեմ Ասորի)

Աղոթքը սրտի գործ է և ոչ թե շրթունքների: (Գրիգոր Նարեկացի)

«Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն»:

Փիլիպպեցիներին 4:6

«Սրա համար ասում եմ ձեզ, թե աղոթք անելիս ինչ որ խնդրեք, հավատացե՛ք, թե կստանաք ու կտրվի ձեզ»:

Մարկոս 11:24

«Եվ ամեն բան, ինչ որ աղոթքի մեջ խնդրեք հավատալով, դուք պիտի ստանաք»:

Մատթեոս 21:22

Գրականության ցանկ

1. Լ.Թորգոմյան, Մանկավարժության արժեքանության հիմունքներ, ՈՒսումնական ձեռնարկ,

հրատ.,2011

2. Մաղաքիա Օրմանյան « Համապատում» էջ 399-401

3. Մեկնություն ըստ Պետրոս արք. Բերդումյանի «Աղբյուր Բացյալ» էջ 209-223

4. Ավետարան ըստ Ղուկասի 18:10-14

5. Աստվածաշունչ մատյան

6. Կրոնի դասագիրք ՔԴԿ Ս.Էջմիածին- 2000

7. «Դպրեվանքյան քարոզներ» Նորայր աբղ. Պողարյան Փարիզ, 1929 թ

8. Կրոնի դասագիրք է Տարի ՔԴԿ Ս.Էջմիածին- 2000

9. https://www.youtube.com/watch?v=zgmRyxglOJY